

# ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի.  
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Маскъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լինովով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.  
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ի Գ Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

## ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

Տխուր երևոյթ.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Մամուլ. Սարսափելի հեղեղ Հաղթանի չորակալ-  
քում. Նամակ Սղոմիսի դաւաճելի. Ներքին լու-  
րեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Անդ-  
րայից. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԻՆ.—  
ՀԵՆՈՒՅԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱ-  
ՆԱՍԻՐԱԿՈՒՆ. Նամակ Ամերիկայից.

## ՄԻ ՏԵՈՒՐ ԵՐԵՆՈՑ

Մենք շատ անգամ գանգատներ ենք  
լսում մեր ժողովրդի անընթերցասի-  
րութեան մասին. Կրթութիւնները  
ցոյց են տալիս, որ այն գիւղերում, ուր  
բոլորովին ունեն զարգացում, յաճախ դուր  
չէր գտնուում ընթերցանութեան ոչ մի  
գիրք. այլ ևս չենք խօսում լրագրի մա-  
սին, որի գիւղում երեւալը հաղորդելու  
երեւոյթներին մէկն է. Կարող ունենալ  
սիրում է մեր ժողովուրդը. բայց դարձ  
յաճախող միայն մի նպատակ ունի՝ սո-  
վորել գրագիր տալ իւր, որպէս զի  
կարողանայ ստորագրել իր անունը, կա-  
րելու գէպերում կարողանայ նամակ գրել  
և ստացած նամակը կարգալ, պայմանա-  
թղթեր կազմել զանազան ձեռնարկու-  
թիւնների համար, մի խօսքով ունենալ  
ձեռքին մի միջոց աւօրեայ յարաբերու-  
թիւնների ժամանակ զօրօգրելու հա-  
մար:

Իսկ գրագիրութեան միւս կողմը,  
որ վերաբերում է նրա մտաւոր և բա-  
րոյական նպատակներին, մնում է բոլոր-  
ովին անուշադիր, չը ծնելով զօրծնական  
արդիւնքներ. Կրթութեան մարդը չէ գիտնում  
գրքին և տպագրական խօսքին վառ պա-  
հելու իր մէջ մտաւոր հետաքրքրութիւն  
և ընդարձակելու իր բարոյական կապը  
աւելի մեծ շրջանի հետ, քան իր գրացի-  
ներն են. Ենթադրեալ այդ հանգամանքի նա  
ոչ միայն առաջ չէ գտնում, այլ և կամաց-  
կամաց մոռանում է այն, ինչ որ նա սովորած  
է եղել դպրոցում մի ժամանակ. Կրթը  
շուրջովին է համարվում գիւղի մէջ.  
Գրքի վրա ծախսած փողը նկատվում է  
իրեն մի անգործական քայլ, որը իրա-  
նական չէ գտնում շրջապատողներին մէջ.  
Ուրեմն մի կողմից տեսնում ենք ձգտում  
գէպի գրագիրութիւն, իսկ միւս կողմից  
անընթերցասիրութիւն և արհամարհանք  
գէպի այն, ինչ որ պէտք է լայնացնել

մարդու աշխարհահայեացքը և կրթի նրա  
յարաբերութիւնները գէպի շրջապատող  
հասարակութիւնը:

Իսկ տխուր և մի և նոյն ժամանակ վը-  
նասակար մի երեւոյթ է, որը պէտք է ա-  
ռանձին ուշադրութեան առնել և որի  
բարեփոխութեան համար նպատակայար-  
մար միջոցներ ձեռք առնել: Ժողովուրդը  
պէտք է համոզվի, որ կրթութիւնը չէ  
վերջանում դպրոցով, այլ նա պէտք է  
շարունակվի և ապագայում. նա պէտք է  
հասկանայ, որ տպագրական խօսքը նրան  
պէտք է տայ թէ գործնական կեանքի  
համար բազմաթիւ օգտաւէտ ցուցումներ  
և թէ կապի նրան աւելի լայն աշխարհի  
հետ, քան նրա անձնական սահմանափակ  
շահերը շրջանն է: Իսկ կարեւոր մի խն-  
դիր է, որի նպատակայարմար լուծման  
համար գործնական կեանքի մէջ պէտք է  
մի կողմից աշխատեն դաւաճական ինտե-  
լիգենտ ոյժերը, իսկ միւս կողմից այն ան-  
ձինք և հիմնարկութիւնները, որոնք զաւղ-  
ված են ընթերցանութեան գրքեր և դա-  
նազան հրատարակութիւններ լոյս ըն-  
ծալով ժողովրդի համար:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### Մ Ա Մ Ո Ւ Լ

Ինչ էլ ասէք, բայց թիւրբանայի կեանքի  
մէջ այժմ ամենախոշոր երևոյթը հոգեվաճառու-  
թիւնն է, եթէ, ի հարկէ, չը հաշուեն սովը և  
այլ նիւթական տառապանքները: Վտրանդար  
լրագրիւր տպել է գերմանացի պատուր Բրօքսի  
մի նամակը, որով նա հերքում է լրագրական  
այն տեղեկութիւնները թէ գերմանացիները  
Փոքր-Ասիայի որբերոցները դարձրել են հա-  
ւատարմութեան գործընկեր: Այդ պատասխանը  
վերին աստիճանի ճիշդ հայեացքներ է պարու-  
նակում քրիստոնէութեան և բարեգործութեան  
մասին: Պատուր Բրօքս յայտնում է, որ քրի-  
ստոնէութիւնը նախ և առաջ պահանջում է  
քրիստոնէութիւն, որ ծէսեր չէ, այլ մի ամբողջ  
գաղափարական վարպետութիւն:

Ինչպէս մարդ կրնայ խօսել հայ և կամ  
բողոքական կրօնի մը վրայ: Յիսուսի կրօն-  
ը ազգերու տարբերութեան չի նայիր. ընդ-  
հակառակն այն կրօնը կուզէ ամէն ազգի,  
ամէն ցեղի և աղանդի պատկանող Գրիստոսի  
ձայնարիտ հետևողներն ի մի ձուլել ի Գրիս-  
տոս և մէկ մարմին կազմել, ինչպէս մեր  
Տէրը ըսած է Յովհաննու աւետարանին 18-րդ  
գլխուն 21-րդ համարին մէջ: Միմիային ծէսե-

րը տարբեր են իրարմէ. ինչպէս կրնաք մտա-  
ծել թէ մենք մեր ծէսերը սորվեցնել կուզենք  
որբերուն: Մենքը ամէն աղանդի մէջ կը փո-  
խուին, կը տարբերին. բայց և ոչ մէկ կա-  
տարեալ ծէս կայ: Ամէն ծէս, ինչպէս նաև  
մեր, իրենց պակասութիւնները ունին, և  
ասոր համար է որ շատ ծագրելի բան մը  
պիտի ըլլար եթէ մենք հոս եկած ըլլայինք  
հայերուն սորվեցնելու մեր ծէսերը: Արդեօք  
յոգուածագիրը կը մտածէ թէ, մեր հայրենի-  
քը, ազգականները ձգած ենք հոս գալով ձեր  
տոյց մեր աղանդին ծէսերը սորվեցնելու:  
Մենք եկած ենք գիթութեան գրգռում, որպէս  
զի օգնենք անոր տղաքներուն և անոնց սոր-  
վեցնենք Գրիստոսի կրօնը: Մեր համար  
ամէն ծէս հաւասար է, և այս պատճառաւ է  
որ մեր խնամած տղաքներուն կը թոյլատ-  
րենք յաճախել իրենց եկեղեցիները: Մենք  
լաւ գիտենք թէ մեր փրկութիւնը մեր ունե-  
ցած ծէսերէն կախում չունի բնաւ, և վեր-  
ջին դատաստանին օրը Աստուած մեզ չը պիտի  
հարցնէ թէ «Ո՞ր ծէսերուն հետեւած էք», այլ  
պիտի հարցունէ, «Ի՞նչ խօսքերու հնազան-  
դեցած: Հայ մը, յոյ մը և հռոմէական մը  
որ իրապէս Գրիստոսի ձայնուն կը հետևի,  
հաղար անգամ աւելի մօտ է մեզ, քան թէ  
բողոքական մը, որ ինքզինքը լուսաւորեալ  
կարծելով, չուզեր հնազանդել Գրիստոսի խօս-  
քերուն և յայտնութեանը:

Ինչ աւելցնենք այս խօսքերի վրա: Մի  
հոգևորականից աւելի շատ ազատամտութիւն  
հազիւ թէ կարելի լինի պահանջել. և եթէ միւս  
եկեղեցիների պաշտօնականներն էլ սովորեն այս-  
պէս մտածել և խօսել, այն ժամանակ մենք  
կարող կը լինենք հանգիստ մնալ, հաւատարմ  
որ կրօնական երկպառակութիւնները այլ ևս  
չեն կենդիւ: Հարցը միայն այն է թէ գեր-  
մանական պատուրները որքան կարողանում են  
գործադրել իրանց գրածը կեանքի մէջ: Վտր-  
անդարը, պատասխանելով պատուր Բրօքսին,  
բերում է փաստեր, որոնք ցոյց են տալիս թէ  
բողոքական եկեղեցականներն էլ ազատ չեն ֆա-  
նատիկոսութիւնից, այսպէս, Նրուստի մի գեր-  
մանական որբանոցում բանը այնտեղն է հասել,  
որ նոյն իսկ հայերէն լեզուի դասաւարտութիւնը  
յանձնած է յոյներին: Լրագրիւրը բերում է և  
այն դարձանալի երևոյթը, որ գերմանական որ-  
բանոցներին մի քանի հեռուում են պատուր  
Բրօքսի մտքերին, մինչդեռ կան և այնպիսիներ  
ը, որոնք դպրոցը, որբերին խնամելու բարե-  
գործութիւնը դարձրել են հաւատարմութեան  
գործընկեր: Կերմանական լրագրիւրները, ինչպէս  
գրել էր Բերլինի մեր թղթակիցը, պահանջում  
են որ գերմանական բարեգործութիւնը Թիւր-  
քիայում հաւատարմութիւն չը դառնայ. և ամեն  
հանգամանքներ ցոյց են տալիս, որ գերմանա-  
կան բարեգործների նպատակը Նիփտոսի հով-

տում Լիւթերի հօտը բաղձացնել չէ: Ել ինչու  
են մի քանի պատուրներ այնպիս անտես անում  
իրանց ուղարկողների ցանկութիւնը: Որովհետեւ  
հոգևորականներ են: Ուրիշ պատճառ մենք չենք  
գտնում...

Վիեննայի «Հանդէս Ամսօրեան» յունիսի հա-  
մարի մէջ առաջին տեղը յատկացրել է Պուշկի-  
նի բաւական ընդարձակ կենսագրութեան, որ  
գրել է Կ. Տրեբնին: Առանձին թերթի վրա  
տպւած է Պուշկինի հիւանդի պատկերը, որի  
նմանը հազիւ թէ շատ լոյս տեսած լինի Ռու-  
սաստանում: Այդ պատկերի տպագրութիւնը  
միանգամայն պատիւ է բերում Միլիթարեան  
տպարանին:

## ՍԱՐԱՓԵԼԻ ՀԵՂԵՂ ՀԱՂԱՍՏԻ ՇՐՃԱԿԱՑՔՈՒՄ (Նամակ Հաղթանից)

Յունիսի 2-ին, չորեքշաբթի օրը, կէսօրից յե-  
տոյ, Հաղթան գիւղում և նրա շրջակայքում մի  
սարսափելի հեղեղ տեղաց: Սկսեց ամպերը  
սկսեցին հաւաքվել, ինչպէս մեզ երևում էր,  
մերձակայ Ուրալ կոչված գիւղի հարաւային  
կողմը գտնված սարի գլուխը, բայց իրօք շատ  
աւելի հեռուն էր գնացել, և այնպիսի սարսա-  
փելի կարկուտ թափել, որի նմանը այս կողմե-  
րում երբեք տեսնված չէ: Կարկուտից անմիջա-  
պէս յետոյ գոյացաւ մի այնպիսի սարսափելի  
հեղեղաշուր, որ սարսափ էր ազդում տեսողին:  
Չէր կարողանում ազատվել հեղեղաշուրի առաջ  
ընկած և ոչ մի առարկայ թէ քար, թէ ծառ,  
թէ անասուն, թէ մարդ և այլն: Զանապարհին  
հանդիպան իսկոյն կրակում էր ջրի սարսա-  
փելի արագ և ուժեղ հոսանքից:

Ամենամեծ հեղեղաշուրը գոյացել էր Հաղթա-  
նի հարաւային կողմը գտնվող ձորի մէջ: Զա-  
ղացալու և կոչված փոքրիկ դեռնակի և Ենոյ  
գիւղի հանդում Հաղթանի սահմանակից մի  
գետակի ընթացքով:

Առաջին ձորում հեղեղը արմատախիլ էր ա-  
րել առաջին ծառեր և դուրել վիթխարի քա-  
րեր. այդ ձորում գտնվող ջրաղացներից եր-  
կուսն էլ հիմնադրատակ կործանել էր և միջի ը-  
տը իրենք ջրից, արարել: Սրանցից մէկն այնպէս  
էր գետին հաւասարեցրել, որ եթէ իր երկու  
աղբիւրների ներկայութիւնը չը լինէր՝ ոչ ոք չէր  
կարծի, թէ այնտեղ ջրաղաց է եղել չինոս:  
Սրանցից մէկի տէրը, որովհետեւ անձրեւի ժա-  
մանակ այդտեղ չէ լինում, այլ պատուարված  
է լինում մօտիկ անտառում, երբ լսում է հեղե-  
ղի աւելի ձայնը, իսկոյն վազում է գէպի իր  
ջրաղացը, որպէս զի մուշտակը հանէ և թըրջ-

բազմութեան մը կը ծախեն գնդապետին սկսեալ  
մինչև գեղարուեստի վերջին արտադրութիւնե-  
րը, ամեն երևակայիլի առարկայ: Մարդոց և ժա-  
մանակի տնտեսութեան չնորհիւ գնեցը շատ  
չափաւոր և վտանգելի են. միլիոններ կը շահին  
այդ չուկաները, իսկ մնացած պատիկ խնութի-  
ւները հով կը կրնան, ոմանք հազիւ վարձ կըր-  
նան վճարել, ոմանց ալ ուրիշ բան չէ մնացել,  
բայց եթէ իրենց տապաւնագիրը գրել տայ:

Նոյն գրութեամբ կը գործեն մեծ ընկերու-  
թիւնները: Անցեալ ամառ պղնձի մեծ tract  
մը կազմվեցաւ 75,000,000 դոլար դրամագլխով:  
Standard oil Company-ի ծանօթ հերոսները գոր-  
ծին մէջ մատ ունէին, սուսկի պէս աճեցաւ,  
պղնձի գինը ահապիս բարձրացում ունեցաւ,  
երկրին բոլոր պղնձի առետուրը մենավաճառ  
դարձաւ:

Ինչ պիտի ընէ կառավարութիւնը, հարցում  
մ'է, որ բնականօրէն ամեն մարդ կը փորձվի  
հարցնել. եթէ թոյլ տրվի այսպէս ամեն բան  
մենավաճառի վերածել, քիչ վերջ հաղաքներ  
սովամահ պիտի կորնչին, երբ մեծ ընկերութիւն-  
ներ բոլոր ցորենը, միսը, կաթը և ամեն նպա-  
րեղէն մենավաճառների կնքով կրնան: Հասա-  
րակաց կեանքէն աւելի կառավարութիւնը վը-  
տանդի տակ է: Չիպակոյի նախկին կառավարիչ  
մը, Ալթէլի, բանախօսութեան մէջ կըսէր, թէ  
այսպիսի անապի հարստութեանը՝ գոյութիւնը  
ինքնին սպառնալիք մ'է երկրին օրէնքներուն և

## ԲԱՆԱՍԻՐԱԿՈՒՆ

### ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

#### Բ օ ս տ օ ն, մայիսի 21-ին

Աշխարհի յաւիտեական խնդիրը՝ տնտեսական  
հարցը այսօր Ամերիկայի մասլոյն և հասարա-  
կաց մտածութեան մէջ ամենէն կարեւոր տեղը  
կը զուէ: Հին աշխարհի մէջ հարուստի և աղ-  
քատի, գործարանատիրոջ և գործաւորի յարա-  
բերութիւնները այնքան որոշ չեն կրնար ցոյց  
տրվի, իրենց պարզութիւնը կորսնցնելով կարգ  
մը կասակարգային և ընկերական խնդիրներու  
մէջ: Նոր աշխարհը ազնուականութիւն, արքայա-  
կան տուն, պատուանշան զինուորական որոշ  
դասակարգ չունի: Հոս միայն կայ ամենակարող  
զուրկ, որ մարդս երկու դասակարգերու միջին  
կամ միւսին կը ջրէլէ—կամ հարուստ կը լինի և  
կամ աղքատ: Չափազանցութիւն չէ ըսել, թէ  
հոգևորներուն թիւը ամենէն անվրէպ չափն է  
ընկերական և բաղադրական ազդեցութեանը, ե-  
թէ Նոր աշխարհի հասարակապետութեան քա-  
ղաքացի ես:

Ովկիանոսի այս կողմը դրամագլուխի և աշ-  
խատութեան խնդիրները իրենց պարզութեան  
հետ հակապական փոփոխութեանց և նոր երե-

ւոյթներ ստեղծելու հրապոյն էլ ունին: Անդ-  
րացի դրամագլուխ մը կը յայտարարէր, թէ Միա-  
ցեալ-Նահանգները այցելելը ինքնին դաստիա-  
րակութիւն մ'է: Կրամագլուխի ստացած հակա-  
յական ծաւալը, նորաւոր կուտակումները և ան-  
երևակայելի ձեռնարկներ տնտեսադէմքները պի-  
տի ստիպեն նոր օրէնքներ գտնելու:

Տարբին աւելի է, որ դրամագլուխներու ահա-  
գին ընկերութիւններ իրարու ետեւ ձեռք կը բե-  
րեն երկրին բոլոր կարևոր նիւթերը ծախելու  
մենավաճառը. այդ ընկերութիւնները, որ լուիկ  
մնջիկ գործելու սովորութիւն ունին, կրցած են  
իրենց քաղաքական ազդեցութեան չնորհիւ, հա-  
կաւակ երկրին և նահանգներու օրինաց, ահա-  
գին ոյժ մը ստեղծել, տարօրինակ հիւրաւ մը,  
որուն տեսքը սակայն դեռ նոր սկսել է լուո-  
վել հասարակ գործաւորին և օրական ապրու-  
տը ճարդղին ջուրը: Տեղական լրագրերը այսօր  
Ֆիլիպիններէն աւելի կը զբաղվեն այդ խնդրով.  
Եթէ Ալկլինալոն քանի մը եանքի գլուխը կը  
սպաննէ, այս ցորենի, ածուխի, փայտի, տախ-  
տակի մենավաճառ ընող անխնդ ընկերութիւն-  
ները կը սպառնան միլիոններ անօթի ու անպա-  
տապար թողուլ: Եթէ ոմանց կարծածին պէս  
կառավարութիւնը այս կարգի արտաքին խն-  
դիրներով ժողովուրդը զբաղեցնել կուզէ, ներ-  
կայիս գտնէ այդ շնորհը շատ քիչ աշուղտիւն  
կը գտնէ:

Տեղական լեզուով tract կը կոչվին այն ըն-

կերութիւնները, որ կը կազմվին շատ մը մանր  
մուշի ձեռակերտողներէ. օրինակ, թուղթ  
չինոյ գործարանները կը միանան թուղթի  
ընկերութեան անուան տակ, կորչեն թուղթ  
չինոյէն չափը, գինը և այլն, այսպէսով կը  
չնջնան մրցումը, կիչին են հրապարակի վրա ի-  
րենց քաճահաճ գիներով, գործաւորները կը  
ստիպվին գործատիրոջ պայմաններուն ստրուկ  
դառնալ, գործադուլ՝ միակ դէնքը բանուորին,  
անգոր է ընկերութեան դէմ, մէկ տեղէ գործա-  
դուլ ընող բանուորը Ամերիկայի որ և է թուղթի  
գործարանը կը կրնար գործ գտնել:

Օրաթերթ մը կը հաշէ, թէ 1899 յունվար  
1-էն ի վեր հազար միլիոնէն աւելի դրամագլուխ  
գրվել է նորանոր ընկերութեանց համար. հա-  
րկաւոր միլիոններ կը կազմվին ամեն օր.  
այս համամասութիւնով դեռ տարին էր բոլորած  
հանդերձ, հաց, տուն և թերեւ օդն ալ այս հա-  
րուստներուն վերաբերին. Tract-ներու առաջին  
բային է ջնջել փոքր առևտուրները, և յետոյ  
բարձրացնել գները, առանց բարձրացնելու  
բանուորի օրականը: Ընկերութեան բաժնէտէրեր,  
մեծաւ մասամբ միլիոնատէրեր, հարկերն մինչև  
1 շահով ալ կրնան մեծ գումարներ շահել. այդ  
հաճախ մրցումի դէմ փոքր դրամագլուխները  
անգոր են: Բաղադրի մէջ կան երկու-երեք խո-  
շոր վաճառատուներ, ինքնին հսկայ չուկաներ  
մինչև 5000 ծախող աղքատներով և մարդերով,  
որք աննշան վարձքով մը մինչև երեկոյ ահագին

վերուց աղաքով. բայց ջուրն այնպիսի սաստիկ արագութեամբ հասնում է ետեւից, որ խեղճը թողնում է իր մուշտակը և փախչում ջրից ազատվելու համար: Նա բոլորովին չէ էլ ենթադրում, որ իր ջրաղացը բոլոր կանգնածներով և ամաններով կարող է զոհ գնալ հեղեղաջրի լափող հոսանքին: Գետակի վրայի հինաւուրց կամարակապ քարաշէն կամուրջի երկու հիւղերն էլ այնքան է փոքրիկ ջուրը, որ այժմ բոլորովին մոտազուրկ է այդ երեքնն ապահով կամուրջի վրայից անցնել: Զուրը չէ զգացել լափելու և 30-ի չափ կենդանիներ, որոնք պատահել են իր հոսանքին: Այդ կենդանիները պատկանում են հաղաթանցիներին: Հեղեղաջուրը բոլոր ջրաղացների առունների ակնները բոլորովին փակցրել է:

Ներկայումս մեծ հեղեղաջուրը Ծնող գիւղի հանդուս շանթի արագութեամբ վրա է հասնում և մի գուլթան լծած իր 10—12 զոյգ եղջերով ըշում տանում է դէպի Ձորապետ. խեղդվելուց ազատվում են այդ անասուններից միայն երկուսը, որոնք թափառաբերով կապներ կտրում են և փախչում դէպի Հաղաթան արտերը, որտեղից զորքուղին տանում է տուն, իսկ գուլթանաւորները հազիւ են կարողացել փախչել ջրի առաջից: Ծնող գիւղի կողմերը գտնված են մի բանի դիմաց կանանց և երեխանց, որոնք ենթարկված են եղել թէ հեղեղին և թէ կարկուտին:

Ծնողի մոտերը մի ուրիշ հեղեղաջուր անտառից բխել տարել է երկու եղջերու և մէկ արջ, որոնց գէշերը գտնվել են Արճիս կողմից գիւղի մոտերը, որ սահմանակից է Ծնող գիւղին:

Պատմում են, որ երբ սկսվել է կարկուտը, սարում գտնված թուրքի սարուորդները, որոնք սայլը բարձած իրանց իրեղէններով քնալիս են եղել իրանց սարը, տեսնելով: որ ուրիշ պատըսպարան չեն գտնում, սայլը ընել են մոտակայ փոքրիկ փողոց (ղործի). այդտեղ վրա է հասնում անհուն հեղեղաջուրը և բարձած սայլը լծած անասուններով և մոտը գտնված մարդկանցով ըշում անհետացնում է: Նրախաւոր չեն այս վերջին եղելութեան մասին:

Կարկուտի սկսվել է Մարց գիւղի վերին կողմը գտնված Չաթիւն-դաղի լեռներից և անցնելով Հաղաթանի հարաւային և արեւելեան կողմը գտնվող լեռների վրայով՝ հասել է մինչև սահմանակից Ծնող գիւղը: Փայքերը է բոլորովին սարերում գտնված բոլոր ցանքերը և Ծնող գիւղի դաշտային արտերի մի մասը: Հեղեղին և կարկուտից ուրիշ չափ տեղեր էլ դոյացել էին մեծ մեծ սրնթիաց ջրեր, բայց նրանց տուած վնասն այնքան էլ մեծ չէ:

Կարկուտի գալուց երեք օր յետոյ գտնվել են հանգիսի չեղջերով դեռ չը հալված կարկուտի մնացորդներ: Հեղեղաջրի բեռնած կարկուտի հատիկներից իւրաքանչիւրը մէկ ընկուղաչափ էր մեղ մոտ: Թէ ինչ մեծութիւն կունենար իր տեղում, այդ կարող է գուշակել ընթերցողը, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ այդ հատիկները ջուրը բերել է 6—7 վերստ հեռաւորութիւնից:

Այսօր, յունիսի 8-ին, Հաղաթանի վանքի վանահայր Գեղամ վարդապետի և նոյն գիւղի տանուտէր Գրիգոր Նրզնկեանցի յորդորանքով Հաղաթանի և Ուրնակի գիւղացիներից տունը

սահմանադրութեան, և իրան հասարակապետութիւնն ալ ունայն բան մը չերեւիր, երբ յիշենք թէ մարդ մը անհամար միլիոններու չնորհիւ իր հաւասար քաղաքացիներու հարկը հաղարհներու հացը և կեանքը արհիւն մէջ ունի:

Ներկայիս տիրող վարչութիւնը բարեկամ է այդ ընկերութեանց, ըսողներ կան, թէ Մաք-Փիլիպի իր ընտրութիւնը անոնց կը պարտի: Այդ ստոյգ լինի թէ ոչ, այս որոշ է թէ հանրապետականաց օրով ընկերութիւնը սպառնալից ծաւալ և կարեւորութիւն ստացան մինչև ներկայիս դարձան հասարակապետութեան ամենէն տաղանապալից հարցը: 1900-ի ընտրութեանց միջոցին այս պիտի լինի կուսակցական պայքարին առաջին հարցը և տարակոյտ չը կայ, թէ երկու կուսակցութիւններն ալ հաւասար եռանդով պիտի խաչակրութիւն բարոյնն այս կեղեքիչներու դէմ և անոնց ջնջումը խոստանան, եթէ իրենց պաշտօնի գլուխ անդնին. նոյնքան ալ որոշ է, թէ և ոչ մին պիտի կրնայ չարիքը դարձանել: Սահմանադրութիւնը և նահանգային օրէնքները հազար ու մէկ անորոշ կէտեր ունին. դժուար չէ բառ մը տարբեր իմաստով մեկնել, մասնաւոր, որ այդ մեծատունները երկրին ամենէն բարձր օրէնսդիտական տաղանդը ունին իրենց տրամադրութեան տակ: Ուսիկներն մէջ ամեն նշանաւոր փաստաբաններ ընկերութեանց ազնւանքներ կը համարվին, նոյն իսկ կոնգրեսի

մէկ մարդ հաւաքվեցին և գնացին Ջրաղացաջրի վրա գտնվող քարէ կամուրջի հիւղերը նորոգելու կամ, որ աւելի ճիշդն է, մի փոքր ամրացնելու:

Ա. Բարաջանեանց

ՆԱՍԱԿ ՇՈՒԼԱՎԵՐԻՑ

Յունիսի 2-ին

Այսօր ակնաւորեա եղանք մի ըստմենի տեսարանի: Մի անաղին սայլ, բարձած իրանց, նախընթաց գիշերը կորտած վազերի մի մասով, մի բանի գիւղացի կամաց դէպի դաւառական վարչութիւնն էին ըշում: Խնչ պիտի յայտնէր ստոր և գլուխը վրէժնորութեան զոհ դարձած գիւղացին: Սայլն ամեն ինչ ինքն ասում էր: Յանցանքներ ձրտեղ չեն դործվում և քանի քանի տեսակ բայց կան յանցանքներ, որոնք իրանց զղուելի ճանաւորութեամբ աչքի են ընկնում և մնացածներէ խիստ որոշվում: Վրէժնորիք լինել և այն էլ այն պատճառով, թէ այս ինչը՝ ինչու իր աղջիկն ինձ չը տուեց, կամ ինչու փողոցում ինձ բաժանեց և այն, ու մի մեծ տարածութիւն նոր ծաղիկ վազեղ ոչնչացնել, դրկել մի ամբողջ ընտանիք իր ապրուստի միակ միջոցից՝ դարձել բան է, այնպէս չէ. սակայն մեղ մօտ այս երկրորդ դէպքն է անցած ապրիլից դէպք:

Վրէժնորութեան մէջ չուրվելից յանցաւոր կարծես մըցում է իր հարևան թուրքի հետ, որը այդպիսի գործում միջոցների մէջ խտրութիւն չէ դնում: Հէնց նոր էր, երբ դաւառիս Գեաւուրարի գիւղում մի համանման յանցանք գործվեց, այն զանազանութեամբ միայն, որ այդտեղ կրտաւորող ոչ թէ անշունչ վազերն էին, այլ առողջ անասունները: Մեղութի մէկը մտնում է հարևանի գոմը և, խանչալի աջ ու ձախ հարուածներով, մօտ 15 զուլի լծկան և կիթ ապրանք է պատառոտում, չը խնայելով անգամ այն կովերին, որոնք երկու-երեք օրից յետոյ պիտի ծնէին: և այդ լոկ այն պատճառով, որ, նրա կարծիքով, դատարանը անասնատիրոջ եղբորը մի հին սպանութեան համար պիտի ցմահ աքսոր ուղարկէր, բայց բաւականացել էր երեք ամիս լեռն էր քանտարկութիւն նշանակելով:

Ով է արդեօք որից օրինակ վերցնում, չուրվելից թուրքից, թէ... այդ չէ զլուսորը, այլ այն, որ դեռ ևս մութն է դաւառը, մութ նոյն իսկ ցերեկվայ պայծառ լոյսի տակ...

Յիշենք այստեղ, որ բազմաթիւ այդպիսի յանցանքների մէջ շատ չնչին թիւ են ներկայացնում այն դէպքերը, երբ յանցաւորը ըռնվում է տեղին ու տեղը, յանցանք գործելիս, կամ վկանների ցուցմունքով հաստատվում է ոճիրը և մեղաւորն արժանի պատիժը ստանում. մեծամասնութիւնը մնում է անպատիժ, չնորհիւ այն հանցաւորները, որ յանցանքը դատարանում, վկաններ չը լինելու պատճառով, ոչ մի միջոցով կարելի չի լինում հաստատել և դէպի յանցաւորները եղած կասկած մնում է միայն դատարի կասկած: Գատարանից այդպիսով ազատվողներին կարող էր պատժել հասարակութիւնը, որին օրէնքով թող է արված արտաքսել իր միջից իր փախած անգամին, սակայն այդպիսի արտօնութիւնից օգտվելու դէպքերը հազուադիւր են և դա ունի իր պատճառները: Մէկին գիւղական համայնքից արտաքսելու համար համախոսական

անդամներ շահեր ունին այդ ընկերութեանց մէջ, ծերակոյտը՝ «միլիոնատերերու» ակումբը կոչված է և արդէն ժողովրդին ուղղակի ներկայացուցիչ մարմին մը չէ: Ով պիտի փրկէ ժողովրդը այդ հրէշներէ...

Կարդ մը գործներ ինքզինքնին միլիթարելու նոր կերպ մը կը փորձեն. այդ մարդոց կարծիքով դրամադուրիս այս դարձաբեր խիստ կաւրկոր քայլ մէ դէպ առաջ. այս կերպով հազարաւոր ոչ-արտադրող մարդոց միջնորդի պայտօնը կը ջնջվի և հետևաբար ծոյ սպառողներու թիւը կը պակսի, ինչպէս նաև արտադրութեանց ծախքը. ձեռարուեստները հիանալի կազմակերպութիւն մը կը ստանան, եւսեւներ հետզհետէ կը մեծանան զիրար կու տալով, մինչև որ մէկ մեծ հատ մը մնայ, այն է կաւաւարութիւնը: Պէլլամին իր ոսկեղաւրը այսպէսով չէր սկսեր սակայն:

Միլիթարական երեւոյթ մը եթէ կայ, այն ալ զանազան քաղաքներու ջանքերն են ընկերութեանց ձեռքէն խլելու հասարակութեան իրաւունքները: Նիւ-Յօրքը կը ջանայ քաղաքին պատկանող կաղ արտադրել, ներկայիս կէս արժեքով Մասնագէտի մը կարծիքով կարելի է կազմի գնէն 65% զեղել և նոյն ատեն գործաւորներուն աւելի լաւ օրակաւն և պակաս աշխատութեան ժամը յատկացնել: Արեւմտեան քաղաքները երկտաղաքով կառեր կուզեն բանեց

կազմվում է այն ժամանակ, երբ կարելի է լինում նրա վրա հաստատել յանցանքների մի շարք, որ շատ դժուար է: Մեր յիշածի նման յանցանքները մեծ մասամբ կատարվում են ուրիշի միջոցով. կայ և այն հանգամանքը, որ մի անգամ մէկին արտաքսելու համախոսականը ստորագրած գիւղացին՝ խիստ տուժելով յանցաւորներին բարեկամներից, միւս անգամ այլ ևս այդ տեսակ համախոսականի մասին լսել անգամ չէ ուզում:

Նախկին տարիները շատ գիւղերում, նրանց թիւում և Եուլավերում, գործադրվում էր փոխադարձ երաշխաւորութեան համախոսական, որի չնորհիւ վնասված գիւղացին, այն դէպքում, երբ չէր կարողանում պարզապէս ցոյց տալ յանցաւորին, վարձատրվում էր մի գումարով, որ հաւասար մասերի բաժանած՝ ստացվում էր համայնքի ամեն մի ծխից: Այդպիսի համախոսականը երկու չարիքից փոքրագոյնն է, սակայն այն առաւելութիւնը ունի, որ շատ պակասեցնում է վրէժնորութեամբ վնասող յանցաւորների թիւը, որովհետև յանցաւորը տեսնում է, թէ ինչպէս իր զոյն ստանում է աւելի վարձատրութիւն: Վերջին երկու տարում այդ տեսակ համախոսականը ինչ ինչ պատճառներով գործ չէ դրվում: Եուլավերի հասարակութիւնը ներկայ տարվայ յունիսին նորից կազմեց և ներկայացրեց ի հաստատութիւն պ. նահանգապետի: Հաստատած համախոսականը դեռ չէ ստացվել:

Այժմեան վնասվածները ոչ մի վարձատրութիւն չեն ստացել և արդեօք կը ստանան—գուշակելը դժուար է:

Ա. Ի.

ՆԱՍԱԿ ՍՆՆԱԽԻ ԳԱԽԱՌԻՑ

Վելիսիլէ գիւղ, մայիսի 25-ին

Վելիսիլէ գիւղը իր բազմաթիւ աղքատաւորութեամբ համարվում է առաջնակարգ գիւղերից մէկը, իսկ հայ ընակիչների թիւի կողմից՝ առաջինն է ամբողջ Կախիթում. ունի մօտ 400 տուն հայ: Աղքատականութեան միակ պարագամունքն ու կենսական աղբիւրը կազմում է ընդհանրապէս այդգործութիւնը. գիւղատնտեսական այս ճիւղը մեղ մօտ անաղին ծաւալ ու զարգացումն է ստացել. գիւղը իր չընկալելով ներկայացնում է ծով, որ կանել է մի քանի մղոն վառեղանիք անգամ: Վերջին տարիներում երևան եկած զանազան տունկային հիւանդութիւններ յօշակելի վնասներ հասցրին և խիստ քայքայեցին գիւղացու տնտեսական վիճակը, մասնաւոր ու գիւղացին հասկացողութիւն ու ձեռնհասութիւն չունենալով ձեռք բերելու հարկաւոր գործիքներ ու դեղեր՝ իրանց այգիները մշակում էին հին-հնապետական ձևով:

Սակայն արքունական այգիներին ու գիւղատնտես պ. Սարալեանի այգու օրինակելի մասկութիւնը շարժեց գիւղացիներին բարի նախանշը և նրանց վրա բարեբար աղբիւրութիւն ունեցաւ. կարճ միջոցում տեսան գործիքներին առաւելութիւնը և հաւատացին դեղերի փրկարար դորութեան, այնպէս որ չուտով ընդհանրապէս նրանց գործածութիւնը գիւղացիների մէջ, մասնաւոր ու Քիֆիլիսի Գիւղատնտեսական ընկերութիւնն էլ ամեն գիւղութիւններ չը խնայեց ձեռք բերելու հարկաւոր գործիքներ ու դեղորայք: Բնութիւնն էլ, կարծես, մի կողմ

նեկ 3 մէնթի վճարումով. ընկերութիւնները 5 մէնթ կատեն և շատ կոպտ կը վարվին թէ իրենց գործաւորներուն և թէ զիրենք հարստացնող հասարակութեան հետ: Բոստօնի քաղաքապետը երկու տարվան միջոցին մեծ բարեկարգութիւններ կատարեց, ծովային բաղնիքներ ունեցող կարգ մը աւազակներ վտարեց ծովագերէն և անոնց տեղ չինքն քաղաքին հոյակապ բաղնիք, որ իր ծախքերը կը հոգայ անշուն վարձը մը առնելով քաղաքացիներէն: Նոյն մարդը քաղաքին զանազան կողմերը հաստատեց հասարակաց ձրի բաղնիքներ, մաքրութեան և կանոնաւորութեան հիանալի օրինակներ ունեցող մաքրութեան, հաստատեց հասարակաց լուսաւորութեան մը, քաղաքին պայտօնական գրութեանց յատուկ տպարան մը, լրագիր մը և այլն և այլն: Այս ամենը, սակայն, հարուստներու գործին չէր գար, անաղին աղմուկ յարուցին, քաղաքին պարտը շատցել է, կըսեն, քաղաքապետը շատ չալայ է և այլն: Զարմանալի չը պիտի թուայ, եթէ յաջորդ ընտրութեան շահանալիքը արարած մը դնեն ներկայ ժողովրդական քաղաքապետին տեղը: Թեքուս այս տարօրինակ երկի ձեռք բայց այնքան տարօրինակ չէ, որքան ամերիկացի գործաւորը. այս մարդիկը տրամաբանելու շատ օտար եղանակ մը ունին. ուրախ են, երջանիկ են, բայց այդ երջանկութեան պատճառը փրկաւոր չափ չեն ուզեր զուլանին յոյժեցունել:

մից նպաստելով գիւղացիներին՝ մի այնպիսի առատ բերք ունեցաւ, որ երկար տարիներ անմոռանալի կը լինի 1898 թիւը: Ահա այսպիսով, նրանք դէնը չարտեցին դարերի ընթացքում արժատացած անպէտք նախապաշարմունքը և պապական աւանդութիւնները, որոնցով ամեն մի բնական պատուհաս և երևան եկած նոր ցար իրանց անողոք ճակատագրին և մեղքերին են վերագրում: Ստացած բերքի առատութեամբ ոգևորված և նոր-նոր յոյսերով տոգորված գիւղացիները այս տարի ևս ոչ մի ջանք չը խնայեցին իրանց աշխատանքը արդիւնաւոր անելու և ամեն տեսակ բարոյական ու նիւթական վերկանքներ կրելով, կարճ միջոցում այնպէս ինքուին մշակվեցին այդինքն, որ մարդու մէջ հրճուանք էր զարթեցնում:

Սակայն բնութիւնը կարծես այս անգամ անշունչ լսելով աչքով նայելիս լինէր գիւղացիների դառն քրտինքով ձեռք բերած աշխատանքին, կարծես թէ վազերի առատ և չեղդ զարգարանքը գրգռում է նրա նախանշը. և ահա, ամսիս 11-ին չը տեսնված քանակութեամբ և մեծութեամբ եկած կարկուտը իսպառ ոչնչացրեց գիւղացիներին աշխատանքը, բաց արած թշուառութեան նոր դուռ, հասցնելով նրանց յառաջատուութեան ծայրին. երեք քառորդ ժամ անընդհատ տեղացող կարկուտը, առանց չափազանցելու, դիվելց 1/4 արշին բարձրութեամբ. մեղակացան այդինքն իրանց զարգարանից, ամայացան և զրօի հաւասարվեցին հարկաւոր գետեաւորներ: Անկարելի էր նկարագրել թշուառ գիւղացիների աղիւղորմ լացն ու կոծը, հառաչանքն ու հնձեմանքը. անկարող ենք մի առ մի յիշել իրանց չար բաղնիք ուղղած հազարաւոր անէծքը և լուսակտուր զանգատները: Գիւղացին ողբում է իր սև օրը, նա գիտէ, որ հարուստն այնքան զօրեղ է, որ տարիներ են հարկաւոր վերականգնելու և ուղղվելու համար:

Չարաբանտիկ օրվայ հասցրած վնասը, դաւառապետի առանձին գրութեամբ, տանուտէրը, մի քանի անձանց մասնակցութեամբ, որոնց և արձանագրութիւն կազմելով ուղարկեց դաւառապետին: Վնասը, միայն Վելիսիլէ գիւղին վիճակված վնասը հասնում է մօտաւորապէս 250,000—300,000 ռուբլու: Ով որ մօտից ծախի թէ մեր գիւղացիներին տնտեսական առանց այն էլ աննախանձելի վիճակի հետ, դարձուրանքով պիտի պատկերացնի այս թշուառութիւնը և այն ծանր օրերը, որոնք սպառվում են մօտիկ ապագայում: Որտեղից պէտք է ծաղէ նրանց համար յուսաբեր ստաղը, որով մի փոքր ամբողջ նրանց վիշտը: Համանման դէպքերի համար չը կան մասնաւոր փոխադարձ օգնող ընկերութիւններ, մեղ համար գոյութիւն չունեն բանկային հիմնարկութիւններ. ինչ անի, ում դիմէ, ինչ աղբիւրներից դոյանայ 9,000 ռուբլի, որ պարտաւոր են վճարել կառավարութեան՝ իբրեւ այս տարվայ հարկ: Խնչպիսի միջոցներով պէտք է պատերազմ մղեն իրանց գոյութիւնը պահպանելու համար, քանի որ ցամաքեղ է նրանց միակ կենսական աղբիւրը: Թէ և դառն, բայց և այնպէս անհեղքի ճշմարտութիւնն է, որ առանց կողմնակի օժանդակութիւնների կամ սովամահ պէտք է լինեն և կամ ընդ միշտ գերի պէտք է դառնան տղրուկ վաշխառուներին:

Գիւղացի

միւս օրը գործաւորը կըսէ՝ այս ինչին ըսէ տուէք, կերթան առանց խորհելու՝ ըսէ դաւաժ մը գործելու կը ծախեն, դժբախտութեան, աղքատութեան մէջ ալ նոյն փրկութիւնայական անտարբերութիւնը կը ցուցնեն. այս է պատճառը, որ դրամատէրը իր ուղածը կը խաղայ երկրի մը մէջ, ուր գործաւորին ըսէն ամեն բան կրնար մճուել: Գործաւորական-քաղաքական կուսակցութիւնն չը կայ. բանւորին դատը, շահերը այս կամ այն քաղաքական կուսակցութեան կը ծախվին:

Նիւ-Յօրքի թերթ մը, գործաւորներէն կտրեւով յոյսը, Արեւմտեղի երկրագործ դասակարգին վրա կը դնէր իր վստահութիւնը: Ամերիկացի երկրագործը քաղաքապետը ուրիշ երկրի իր արհեստակիցներուն շատ քաղաքած է, արեւմուտքի մէջ աւելի կը գտնվին ընկերական յառաջադէմ գաղափարներ. հարուստները ըսին դրամ են այս կողմերը, գործաւորները մեծաւսմամբ հպարտ են գործատիրոջ: Հարուստ ընկերութիւնը զէմ արեւմտեան հասարակութիւնը պիտի կուլ 1900-ին, բայց ով գիտէ թեքուս մինչև այն ատեն կարելի է ըսէներեւ տուէ մը ալ կազմվի ըսնի մը միլիոն դրամադրով. մեծ նավաճառողը կըստէ այն ատեն նախադարձ առանց ընտրական պայքարի աղմուկներուն:

Արմէն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կարևոր ենք համարում մեր ընթերցողներին տալ մի քանի անհրաժեշտ տեղեկություններ Քիմիկոսի բացվելիք առևտրական դպրոցի մասին: Դպրոցը պետք է լինի միջին դասարանի և կը գտնվի Ֆինանսների մինիստրության վերահստակության տակ: Նա պետք է ունենայ եռթիվ դասարան, որոնցից առաջին հինգը պետք է տան ընդհանուր առարկաների, իսկ վերջին երկուսը մասնագիտական առարկաների գիտություն: Այդ առարկաներն են՝ կրթություն, ուսուցիչ լեզու, երկու օտար լեզու, պատմություն, աշխարհագրություն, թուրքականություն, քաղաքականություն, ֆիզիկա, առևտրականություն, հաշվապահություն, առևտրական գրագրություն, քաղաքատնտեսություն, օրենսգիտություն, քիմիա, ապրանքագիտություն, առևտրական աշխարհագրություն, գեղագրություն, մարմնամարզություն: Առանձին վերջնաճառով՝ ցանկացող աշակերտները կարող են սովորել տեղական լեզուներ, սղագրություն, երգեցողություն, պար և երաժշտություն: Ուսումը պետք է սկսվի օգոստոսի 20-ին և շարունակվի մինչև յունիսի 1-ը: Դպրոց կարող են մտնել ամեն դասակարգի և դասառնության մասնակիցներ: Դրանցից գերադասություն պետք է տրվի առևտրական դասակարգի մասնակիցների համար: Խնդրվում է տրվի ընդունելության համար մինչև օգոստոսի 20-ը: Ուսման թոշակը կորչի հողաբարձական խորհուրդը մինիստրի հաշվառման: Այդ թոշակը վճարվում է երկու անգամով՝ կիսամյակի սկզբին և Դպրոցը պահպանվում է Քիմիկոսի առևտրական դասակարգի ծախսերով:

«Нов. Об.» լրագրին հաղորդում են Սանահինի, որ Վեհապետ Կաթողիկոսը ժամանեց այնտեղ և իջավ վանքում:

Կայսրուհի Մարիա Ալեքսանդրովնայի հովանաւորութեան տակ գտնվող կոյրերին խնամող Կովկասի բաժնի խորհուրդը խնդրում է մեզ յայտնել, որ կիրակի օր, ամսին 13-ին, ժամի 1-ին, կառավարչապետի պալատում տեղի կունենայ ընդհանուր ժողով, ընկերության 1898 թվի հաշիւը լսելու և մի քանի հարցեր վճեղու համար:

Վաղը, կիրակի, յունիսի 13-ին, Քիմիկոսի դուռնայի դահլիճում տեղի կունենայ Կովկասի հայոց Բարեգործական ընկերության ընդհանուր ժողովը, որ պետք է զբաղվի գլխավորապես ընկերության հաշիւների քննութեամբ և մի քանի ուրիշ խնդիրներով, որոնք վերաբերում են ընկերության մէջ գտնվող յատուկ դուռնաներին:

Քիմիկոսի քաղաքագլուխ Գ. Սանահինով դիմել է խորհրդով Քիմիկոսի նահանգապետին, խնդրելով երկու ամսով արձակուրդ՝ արտասահման գրնալու համար:

«Новое Обозрение» լրագրի ասելով՝ Քիմիկոսի դուռնայի ձայնաւորները՝ Ա. Յովհաննիսեան և Լ. Միքայելով խորհրդ են ներկայացրել քաղաքագլուխին, որով հրամարվում են ձայնաւորի պաշտօնից, ժամանակ չունենալու պատճառով:

Խմբագրութեան մէջ ստացվեցին. 1) Վ. Տոմոնանցի «Экономическое развитие Сѣверной Америки и Западной Европы въ 1898 году» յօդուածը, որ արտատպւած է «Научное Обозрение» ամսագրի մայիսի համարից. յօդուածը բաղկացած է մեծաւոր 14 երեսից և պարունակում է իր մէջ համադրումար տեղեկութիւններ Ամերիկայի և եւրօպական պետութիւնների տնտեսական վիճակի մասին. 2) Ի. Ֆրգուսօվսկու «Организация общедоступной сельскохозяйственной статистики» զեկուցումը, որ նա ներկայացրել է կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան խորհրդին:

Ջիվանչիլի գաւառի ՄԱՂԱՎՈՒԶ գիւղից մեզ գրում են. «Այս տարի խոտի հունձը մեզանում շատ սուղ է, կարելի է ասել, թէ խոտ չը կայ. իսկ արուերից ուտելու հաց է սերմացու վեր կառնենք: Թէ և գարնան սկզբներում երկարատև երաշտ եղաւ, բայց վերջին անձրևները բաւական օգնեցին»:

Երևանի գաւառի ՂԱՍՄԱՐԼՈՒԻ գիւղից, յունիսի 10-ից, մեզ գրում են հետևեալը. «Պուշկինեան տօները մեր գիւղումն էլ արձաղանք գրում: Մայիսի 28-ին, պ. պրիստաւի նախաձեռնութեամբ, տաղանդաւոր բանաստեղծի հարկաւանակի առիթով մեր գիւղի ուսումնարանի բաղում փոքրիկ լուսավառութիւն կար մի հա-

մատ ճաշկերոյթով: Ծաշկերոյթին հրաւիրւած էին 50-ի չափ շատ թէ բիշ աչքի ընկնող մարդիկ ինչպէս Ղամարուից, այնպէս և շրջակայ գիւղերից: Ծաշից առաջ պ. պրիստաւը փորձեց կարճ և հասկանալի ոճով բացատրել այդ տօնի նշանակութիւնը, իսկ բժիշկ պ. Շահադեանը աշխատեց բացատրել Պուշկինի նշանակութիւնը ինչպէս գրականութեան, այնպէս և ամբողջ մարդկութեան համար: Ապա ամբիօն բարձրացաւ ուսուցիչ պ. Ա. Ստոտաւածտերեանց և կարգաց Պուշկինի կենսագրութիւնը հայերէն լեզուով, որից յետոյ ցոյց տրվեցին կենդանի պատկերներ: Ծաշի ժամանակ հարց յարուցվեց տօնի առիթով սովակաների օգտին փող հաւաքելու, սակայն եղան մարդիկ, որոնք հարցին վերաբերվեցին աւելի դործնական կերպով: Վերջիններս բանաստեղծի յիշատակը յաւերժացնելու համար առաջարկեցին բանալ Ղամարուում գրադարան-ընթերցարան բանաստեղծի անուանով. միւս օրը շարունակեցին նուէրներ հաւաքել գրադարան-ընթերցարանի համար և մօտ 200 բուլբի փող հաւաքեցին»:

ԳՐԻԳՈՐՊՈԼԻՑ, յունիսի 2-ից, գրում են մեզ հետևեալը. «Ներսէսեան նահանգի կառուածատէր իշխան Ալէքսանդր Պալլովիչ Աբամէլի-ձով իւրերեց 3,000 բուլբի տեղիս հայ-լուսաւորական քայքայւած ս. Պետրոս-Պօղոս եկեղեցու վերանորոգութեան համար: Իշխանը թէ՛ և ուսուցաւան է, բայց յարգելով իր նախահայրերի և սրանից 4 տարի առաջ իր վախճանված հօր իշխանակը, որոնց մարմինը հանգչում է նոյն տաճարի հովանու տակ, ինքնակա՛մ իր վրա առաւ վերանորոգութեան գործը, և այդպիսով առաջին առնվեց տաճարի հիմնովին քայքայման և ազատեց մեզ քաղաքի հաղուստներին դիմելուց, որոնք, դժբաղդաբար, անօգուտ տեղ են բռնում ամեն մի հայաբնակ կենտրոնում, միշտ խուսափելով օգնութեան ձեռք կարկառել մի որ և է բարենպաստակ գործի: Տեղիս հայ հասարակութիւնը, կամենալով յայտնել իր երախտագիտութիւնը իշխան Աբամէլի-ձովին, օգտվելով իշխանի գալուստից, մատուցեց նրան ուսուցիչի լեզուով մի ուղերձ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԱՅԻՑ

Լօնդոն, յունիսի 11-ին

Քէնթըրբըրի արքեպիսկոպոսին նամակը կամ շրջաբերականը, զոր հրատարակելին ամսոյս 9-ին Լօնդոնեան օրաթերթերը, կը բացատրէ նետտօրական քրիստոնէից կացութիւնը ի Պարսկաստան և Թուրքիա: Նա ցոյց կուտայ, որ արքեպիսկոպոս Հալիլի օրէն մինչև ցարդ նետտօրական եկեղեցին դիմումներ ըրած է անգլիկան եկեղեցւոյն՝ բարոյական և նիւթական նպատակ հայցելով անկէ: Նետտօրականը, որը երբեմն աւետարանի լոյսը տարին մինչև Ձիւնաստան առաջ թափ մասնաւորապէս ծագումը և բարձրացումը, կարևոր դրոճեր տեսան Սոյոյ մէջ և թէ՛ և այսօր բուն Նետտօրի ուսուցումներն և կամ վարդապետութեանց ճանաչողներ չեն, սակայն դեռ կայ ոգի մը իրենց մէջ եկեղեցին պահպանելու:

Արքեպիսկոպոս Պէնտըն հաստատեց միսիօնարութիւն մը նետտօրականներու համար, որ աւելի պարսկական մասին մէջ յաջողեցաւ, քան թրքական, այս վերջոյն մէջ կառավարութեան յարուցած դժուարութիւններու պատճառաւ: Ռուսիա, թիւրք-ուսական պատերազմին ետք, մեծ ուշադրութիւն տուաւ Պարսկաստանի և քանի որ բերդամական քաղաքակրթութիւնը բռնաբարձ էր իրեն իրաւունքները յճրօպա, բնականաբար ստիպուած էր իր ասպարէզը ընդարձակել դէպի հարաւ՝ Պարսկական ծոցը և Արևելք՝ չինական ջուրերը: Ռուսիա ևս, հետեւելով անգլիական քաղաքականութեան, իրեն միսիօնարները զրկեց ի Պարսկաստան, ու խոստացաւ իր հովանին, եթէ նետտօրական եկեղեցին ձգէ Նետտօրի վարդապետութիւնները և յարի ուսական եկեղեցոյ: Ռուսական եկեղեցւոյ ծրագիրը յաջողեցաւ գլխաւորաբար Ուրմոյ մէջ, ուր անգլիկան եկեղեցին արդէն լաւ գործ ունէր:

Քէնթըրբըրի արքեպիսկոպոսը, որ կը նստի լորդերու ժողովին մէջ, անշուշտ գիտէ թէ ուսական եկեղեցւոյ յաջողութիւնը ինչ կը նշանակէ ի Պարսկաստան: Բողոքական Քրիստոսի ներկայացուցիչը Անգլիոյ մէջ շատ բարեկամական աչքով չի նայիր օրթօդօս Քրիստոսի ներկայացուցիչներուն վրա, որ կը նստին Պետերբուրգին միջոցին մէջ: Կը թելադրէ, որ դեռ պարսկական հողէն քայքայու հարկին չը հա-

սած՝ քրիստոնեայ բարեպաշտ ժողովուրդը դրամական նպատներով աջակցի անգլիական միսիօնարութեան գործին հոն, որ անշուշտ պարզապէս կը նշանակէ մըցում օրթօդօս եկեղեցւոյ հետ:

Արքեպիսկոպոսին սոյն շրջաբերականի առիթով կուզենք ասել հետեւեալը: Վանի մէջ հոգեւրդականութիւն կայ: Կարտուութիւնը, հալածանքը, անօթութիւնը սարկած են խեղճերու խումբեր ձգել մայրենի եկեղեցին և միանալ պապականութեան: Սակայն հոգեւրդականութիւնը մենք չենք կրնար վերադրել միայն Հռովմայ «հին ուրուականին», քանի որ կը տեսնենք ուրիշ ուրուականներ ևս:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Daily Graphic» լրագրիւ հաղորդում է, Սեւաստօպոլի վրայով Քէշիսից ստացած տեղեկութիւններին հիման վրա, որ պարսից Շահի առողջական դրութիւնը շատ է վատացել վերջերս: Պարսից Շահը ամենին չէ դուրս գալիս: Նա բուլէ առ բուլէ կըցնի և ինչդուրութիւնը, զաւանցանքներ ունի և միայն ժամանակ առ ժամանակ կարողանում է պետական գործերով զբաղվել: Շահը համարեա անդադար զուարճանում է տեղեֆօնով, և այդ պատճառով պալատում անց է կացել անքննադատելի թեւերի մի ամբողջ ցանց: Այն սպաւորութեան տակ, թէ պետական գանձարանը դատարկ է, Շահը հրաման արձակեց ծախել գահի ոսկէ զարդարանքները և պալատական այգիների մի մասը: Այդ հրամանը չը կատարվեց:

Կուշկապուից հաղորդում են Կ. Պօլսի, իսկ այնտեղից էլ «Times» լրագրին, որ բլրերը սպանեցին Փիրուշի վաճի վաճառքը, որից յետոյ վաճի կողմովից, երկու քանդանք սպանեցին, և ապա սկսվեցին անկարգութիւններ, որոնք տարածվեցին հինգ գիւղերում: Այդ անկարգութիւնները ժամանակ սպանեցին բազմաթիւ գիւղացիներ:

«Temps» լրագրին Կ. Պօլսից հեռագրում են, որ Սուլէ նահանգապետը կալանաւորվել և նրան տարան Կ. Պօլսի, ուր նա պետք է պատասխան տայ բլրերի և հայերի մէջ վերջերս տեղի ունեցած անկարգութիւնների առիթով:

«Temps» լրագրին Կ. Պօլսից հեռագրում են, որ հանքերի ֆրանսիական ընկերութեան գլխավոր ինժեներին Մալմիլի վիլայէտում աւազակները գրեթէ տարան և 15,000 ֆրանկ փրկանք են պահանջում:

«Echo de Paris» լրագրիւ հաղորդում է, որ կապիտան Տարենի ամեն օր հարց ու փորձի է ենթարկում Պատի-դը-Կամին: Գնդապետը դեռ իր համար փաստաբան չէ ընտրել և չէ ընդունել ոչ ոքի, մինչև անգամ իր ազգականներին:

Դրէյֆուսի ընտանիքը յայտնել է, որ նա մտադրութիւն չէ ունեցել երբեք հեռանալ Ֆրանսիայից, հետեւաբար և այն լուրը, որ իբր թէ նա Իտալիայում կալուածք է առնում, բոլորովին անհիմն է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սուլթանի կրտսեր որդու թիւիստութեան ծէսը կատարելու համար կառավարութիւնը որոշեց ծախել 45 հազար թիւրքաց լրաւ:

Այդ անցքին, որպէս մի առանձին հանդէսին Իլիդ-Քիօսում, անհամբերութեամբ սպասում էին Արդու-Համիդի հպատակները, արտասովոր չնորհներ անկեղծելով փաղիշահից: Արդէն մէկ ամբողջ ամիս, իր Կ. Պօլսի բերդպահ գործի բոլոր հիւանդանոցները կարգի են բերվում և մէկ ամբողջ շաբաթով բաւկապում են թըլ-փատված երեխաներին: Բանն այն է, որ այդ անցքը յաւերժացնելու համար Արդու-Համիդը հրամայեց ձրի թիւիստել հինգ հազար երեխաներին, որոնք դրա համար հաւաքվում են Կ. Պօլսի բոլոր ծայրերից մերձակայ գլխաւորապէս հիւանդանոցները: Այդտեղ իւրաքանչիւր երեխայի համար դրված է մաքուր մահճակալ, որի վրա, թիւիստվելուց յետոյ, նա անց է կացնում եօթ օր. նրան այդտեղ կերակուր են, խմացում են, և հիւանդանոցից դուրս գալու ժամանակ փաղիշահի անունից պալատականները իւրաքանչիւր երեխային տալիս են մի ոսկի: Երեք անգամ աղաղակելով «փաղիշահ մ չօք ետալ» (կեցցէ փաղիշահը), երեխաները թողնում են հիւանդանոցը և շտապում են դնալ տուն, ուր նրանց սպասում են ծնողները, որոնք բաղդաւոր են համարում իրանց, որովհետեւ իրանց որդին մի և նոյն օրն է թիւիստվել սուլթանի որդու հետ: Բարձրատիրոջն պաշտօնեաների և պալատականների զաւակների համար Իլիդ-Քիօսումն էին յատկացրած սենականեր և նրանց թիւիստեց սուլթանի որդու թիւիստող պալատական բժիշկ Ջէվադ-փաշան: Թիւիստութեան առաջին օրը սուլթանն անձամբ այցելեց պալատականների երեխաներին և անձամբ բաժանեց հիւանդանոցի փողեր և թանկագին ընծաներ, իսկ նրանցից մի քանիսին իր որդու աղիւստան նշանակեց: Ծնորհիւ սուլթանի այդպիսի առատաձեռնութեան, պաշտօնեաներից շատերը իրանց ռոճիկները չը ստացան:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

10 յունիսի

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՍԿԻ: Տաւրիկեան Նիկոլայ Եպիսկոպոսի կարգադրութեամբ, մի յանձնաժողով, «Миссионерское Обозрение» լրագրի խմբագիր Սկվորցովի գլխավորութեամբ, պատեց Մեկուսուպօր գաւառի աղանդաւորները բոլոր կենտրոնները: Որպէս միջնորդ դատաւոր միմեանց հետ թշնամի մօլօկան աղանդներին, յանձնաժողովին աջողվեց գրաւել բոլոր աղանդաւորները վտանգութիւնը ու յարգանքը, որոնք խմբերով լըցնում էին այն աղօթատները, որտեղ բարոյ էր խօսվում: Մօլօկաների մի աղօթատան մէջ, Սկվորցովի և միսիօնէր Գօրօնիցիի բարոյից յետոյ, սկսեցին արտասով խորը զգացված ծերերը: Ոգևորութիւնը չափազանց է: Ռուսաց եկեղեցու ներկայացուցիչների հետ բարեկամանալու առաջին քայլն արված է: Ժողովը են մօլօկաների զեկավարները՝ Մզաւի, Զախարով և հետեւ գիւղերից պատգամաւորներ, խնդրելով, որ նրանց աղօթատները այցելեն:

ՄԱԼՈՒՍԻՍՆԻՍԿԻ: Բացվել են զեմսովօր մանկավարժական կուրսեր: Ժողովը են մօտ 70 ուսուցիչներ և ուսուցչուհիներ: Կուրսերի ղեկավարողն է ժողովրդական դպրոցների հոգաբարձու Պրոշչակով: Կուրսերը կը շարունակվեն մօտ մի ամիս:

ՊԵՏՏԻՊՈՐՍԿԻ: Երջակայքում տեղի ունեցած սաստիկ կարկուտը ահագին վնասներ է հասցրել: Եղանակը տաք է: Առաւօտեան ստուերի մէջ 6 ատիճան է:

Կ. ՊՈԼԻՍ: Ռուսաց դեսպան Ջինօվիկի, այցելելով արտաքին գործերի մինիստր Քէլլիկ-փաշային, նորից չօչափեց իր փախստականներին հայրենիք վերադարձնելու հարցը: Ռուսաց կառավարութիւնը առաջվայ պէս պնդում է այդ վերադարձի վրա և պահանջում է, որ փախստականներին վերադարձնվեն մեծ մասամբ բուրդերի ձեռքով նրանցից խլված անշարժ կալուածները:

ՀԱՍՏԱ: Խաղաղութեան կոնֆերենցիայի այն յանձնաժողովը, որին յանձնված են միջնորդ դատարանի ու միջնորդութեան վերաբերեալ հարցերը, գումարվեց այսօր՝ մշտական միջնորդ դատարան, մասնաւոր նրա կենտրոնական բիւրօն կազմակերպելու համար Սերկատուի նիստում քննութեան ենթարկվեցին նաև միջազգային բնիչ յանձնաժողովին վերաբերեալ յօդուածները: Համաձայնութիւն կայացաւ այդ յօդուածների ճիշդ խմբագրութեան մասին: Մտաւկայ նիստում, որը նշանակված է ուրբաթ օր, քննութեան կենթարկվեն միջնորդ դատարանի գործելու կանոնները:

ՊԱՐԻՉ: Լրագրիւնները պնդում են, որ Վալդէկ-Ռուսսօ յանձն կանէ մինիստրութեան կազմակերպութիւնը: Նրանք նախագուշակում են միմիստրութիւնը կը կազմակերպվի մինչև երեկոյ: Ապագայ մինիստրների անունները յայտնի չեն: «Gaulois» լրագրիւ հաւատարմում է, որ Վալդէկ-Ռուսսօ յանձն կանէ գլխաւորապէս մինիստրի պօրտֆէլը, ու գնեւալ Պալիֆէին կը նշանակէ գլխաւորական կարեւորեալ կառավարիչ:

ՊԱՐԻՉ: Պաշտօնական լրագրում հրատարակված է հրաման այն բանի մասին, որ ծովային արտիլերիայի գնեւալ Դեյարօկ խիստ կերպով բանտարկված կը մնայ, մինչև նոր կարգադրութիւնը, կարգապահութիւնը խախտելու պատճառով:

ԼՕՆԴՈՆ: Քէյտէրի գործակալութիւնը հաղորդում է Ապրիլից, որ ծայրագոյն յանձնաժողովը բարձրագոյն դատաւորի վէճը արդար յայտարարեց և Մալիետա-Տանուին թագաւոր ճանաչեց: Վերջինս հրամարվեց յօդուած յանձնաժողովի, որը ժամանակաւոր կառավարութիւնը նշանակեց: Բարձրագոյն դատաւորը և քաղաքային պաշտօնեաները մնում են իրանց պաշտօնեաներում: Կոմիսարները մտադիր են ճանապարհ ընկնել յունիսի 28-ին (16): Յանձնաժողովի գլխաւոր մեջ առաջարկված է, ոչնչացնել թագաւորի իշխանութիւնը և նախագահի պաշտօնը, նշանակել նահանգապետ և օրէնստրական խորհուրդ՝ պետութիւնների կողմից նշանակված երեք անձերից, ղեկավարամետի կառավարիչների պաշտօնով, կազմել տեղացիները ներկայացուցիչների ժողով և ոչնչացնել հիւպատոսական, դիպլոմատական և դատաւարական պաշտօնները: Գերմանացիների մէջ լուր է պտտում, թէ նոր կառավարութեան գլխաւոր կը նշանակվի Զօլֆ:

ԳԵՐՆԵՎԱՆԻ (Շվեյցար): Մեծ Իշխան Վալդիմիր Ալէքսանդրովիչ ժամանեց չորեքշաբթի Անույ, ուր դիմաւորեցին Ստօկհօլմի ուսուցիչ դեսպանաւոր բոլոր ծառայողները: Նախաձեռնիկից

Типографія Грузинск. Издат. Т.—ва Орбеліановская ул., № 27.